Հավելված N 2
ՀՀ կառավարության 2021 թվականի
մայիսի 20-ի N 801 - Լ որոշման

Ծ Ր Ա Գ Ի Ր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻԳՐԱՑԻԱՅԻ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

NN ը/կ	Գործողությունը	Կատարողը (համակատարողը)	ժամկետը
1.	«Հայաստանի Հանրապետության միգրացիոն քաղաքականության՝ ինտեգրման և վերաինտեգրման խնդիրների կարգավորման 2021-2031 թվականների ռազմավարությունը և դրանից բխող 2021-2025 թվականների գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ներկայացում ՀՀ վարչապետի աշխատակազմ	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն	2021 թ. հունիսի 2-րդ տասնօրյակ
2.	«Միգրացիոն հոսքերի կառավարման ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ներկայացում ՀՀ վարչապետի աշխատակազմ	ՀՀ ներքին գործերի նախարարություն[1]	ՀՀ ներքին գործերի նախարարության

[1] Նոր նախարարության ձևավորումը նախատեսված է 2020 թ. ապրիլի 23-ի «Հայաստանի Հանրապետության ոստիկանության բարեփոխումների ռազմավարությունը և դրանից բխող 2020-2022 թվականների գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» N 638-Լ որոշման N 2 հավելվածի երկրորդ ուղղության 3-րդ կետով: ՀՀ կառավարությունը 2021 թ. ապրիլի 15-ի N 586 – Ա որոշմամբ հավանություն է տվել ՆԳ նախարարության ձևավորումն ապահովող մի շարք օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքների նախագծերի վերաբերյալ ՀՀ կառավարության օրենսդրական նախաձեռնությանը: Բարեփոխումների իրականացումն ապահովող օրենսդրական նախագծերի վերոհիշյալ փաթեթը ուղարկվել է ՀՀ Ազգային ժողով:

			ձևավորումից 9 ամիս հետո
3.	«Հարկադիր միգրանտների զանգվածային ներհոսքի ճգնաժամային կառավարման ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ներկայացում ՀՀ վարչապետի աշխատակազմ	ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն	2021 թ. օգոստոսի 3-րդ տասնօրյակ
4.	«Հայրենադարձության խթանման ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ներկայացում ՀՀ վարչապետի աշխատակազմ	Սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարի գրասենյակ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն	2022 թ. սեպտեմբերի 1-ին տասնօրյակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ԹՈՐՈՍՅԱՆ

20.05.2021
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ